ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավվածությունը խմբային աշխատանքներում

ԱՌԱՐԿԱ՝ Տարրական դասարանների ուսուցիչ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հովհաննիսյան Ֆլորա

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Հովակիմյան Գայանե

ԴՊՐՈՑ՝ ՈՒյծի միջնակարգ դպրոց

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ..... 4

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ 7

Փորձարարական մաս 11

Դասի պլանավորում 1.....Error! Bookmark not defined.2

Դասի պլանավորում 2 .....Error! Bookmark not defined.5

Դասի պլանավորում 3 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 211

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 23

Հավելված 1 24

Հավելված 2 25

Հավելված 3 26

Հավելված 4 ..... Error! Bookmark not defined.

Հավելված 5 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովելով հավասար վերաբերմունք բոլորի հանդեպ, բացի այդ կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող աշակերտների համար: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու երեխաների զանազան կրթական պահանջները:

Հարկ է նշել նաև, որ ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և ինտեգրել դասապրոցեսին, խմբային աշխատանքների միջոցով ներգրավել ուսումնական գործընթացում: Ես իմ առջև դրեցի հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենքը:
- Բացահայտել ուսումնական ծրագրի ճիշտ պլանավորման և միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող երեխաներին:
- Դիտարկման արդյունքում հասկանալ երեխաների դժվարությունները, ցուցաբերել համապատասխան աջակցություն և ինտեգրել դասապրոցեսին:

§1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրենք ՀՀ օրենքը՝ ընդունված 2005 թվականի մայիսի 25-ին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին:[1] Սույն օրենքը կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

- **ներառական կրթություն՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ.
- ***<u>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարող է իրականացվել՝</u>***
  - Պետական և ոչ պետական հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ներառական կրթության և տնային ուսուցման ձևով.

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

- Հատուկ կրթական հաստատություններում՝ հատուկ կրթության և ուսուցման ձևով.
- բուժական հաստատություններում (երկարատև ստացիոնար բուժման դեպքում)՝ տնային ուսուցման ձևով.
- Օրենքով սահմանված այլ ձևերով:

➢ ***<u>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության պետական կրթական չափորոշիչները և ծրագրերը</u>***

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում են հանրակրթական և մասնագիտական չափորոշիչներով, ծրագրերով, իսկ դրանց յուրացման անհնարինության կամ դժվարության դեպքում՝նաև հատուկ կրթության չափորոշիչներով և ծրագրերով:
2. Պետական հատուկ կրթական չափորոշիչների մշակման, հաստատման և ներդրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:[2]

<u>Ներառական կրթություն</u>

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման սոցիալական հարմարվածությունը և նրանց հասարակական ներառումը ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության

[2]Տե՛ս նույն տեղում, հոդված 9

օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնական հաստատություններում կազմակերպվում է ներառական կրթություն։

2. Ներառական կրթություն կարող է կազմակերպվել այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով։ Ներառական կրթության իրականացման կարգը և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկը սահմանում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը։

§2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքագրման և տվյալների համակարգման գործընթաց է, որն իրականացվում է երեխայի բնական միջավայրում՝ ապահովելու երեխայի ուսումնական ծրագրերի ճիշտ պլանավորումը, անհրաժեշտ մասնագիտական ծառայությունների և միջավայրային հարմարեցումների տրամադրումը:[3]

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ,
2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,
3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը:

Եթե կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնք խանգարում են երեխային իր կարողությունների չափով մասնակցություն ունենալու ուսումնական գործընթացում, ապա ուսուցիչը,

---

[3]Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 32-րդ կետ

համաձայնեցնելով երեխայի ծնողի հետ (հավելված 1), գրավոր դիմում է դպրոցի տնօրենին՝իրականացնելու երեխայի դպրոցական մակարդակի գնահատում: Գնահատումը սկսելուց առնվազն մեկ շաբաթ առաջ դպրոցի տնօրինությունը գրավոր տեղեկացնում է երեխայի ծնողին դպրոցական մակարդակի գնահատման նպատակների մասին: Ծնողի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում տնօրենի հրամանով հանձնարարվում է դպրոցի ուսուցիչներին և մանկավարժահոգեբանական աջակցության խմբին իրականացնել երեխայի դպրոցական մակարդակի գնահատում:[4]

Դպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ: Որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ՝ համագործակցելով դպրոցի մանկավարժահոգեբան ականաջակցության խմբի, դասավանդող այլ ուսուցիչների և աշակերտի ծնողների հետ, ուսուցիչը որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլի մասին: Երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: Գնահատման այս փուլը, որը ներառում է

[4]Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված, 34-36-րդ կետեր

երեխայի ուսուցիչների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների կողմից դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, տևումէ 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված: Դիտարկման արդյունքների վերլուծության համար կիրառվում է «Երեխայի գործունեության գնահատման գործիքը», իսկ արդյուքները արձանագրվում են «Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկ» ձևաթղթում: Եթե երեխայի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների վերլուծությունը չի հանգում երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման, բայց երեխան մեկ կամ մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգաբանության աջակցության խումբը մշակում է «Կանխարգելիչ միջամտությունների պլան»՝կիսամյակային կտրվածքով ծառայությունների տրամադրման և միջավայրայի հարմարեցումների վերաբերյալ (նպատակներ և դեպի այդ նպատակները տանող քայլեր, դասավնդման մեթոդներ, տեղի և դասասենյակի վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

Կարևոր է, ուսուցիչը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան որ ոլորտներում ունի դժվարություններ և կարողանա աջակցել և ներգրավել դասապրոցեսին:

Դիտարկման արժանի ոլորտներ՝

1. Ըմբռնել հրահանգները և հետևել դրանց
2. Հարմարեցման կարողություն
3. Մասնակցելու և ակտիվ լինելու շահագրգռվածություն
4. Փոխհարաբերություններ հասակակիցների հետ
5. Ինքնասպասարկում
6. Խոշոր մոտորիկա՝ տեղաշարժում
7. Մանր մոտորիկա՝ դաստակի և ձեռքերի գործածում
8. Ուշադրություն
9. Հիշողություն

10. Հաղորդակցում
11. Ընտրություն կատարելու կարողություն
12. Կուլ տալու կարողություն
13. Կարդալու կարողություն
14. Գրելու կարողություն
15. Խոսելու կարողություն
16. Մեքենայով փոխադրվել
17. Համայնքի մատչելիություն
18. Վարքի կառավարում
19. Կողմնորոշում
20. Ապահովության դատողություն

Հաջորդաբար պատասխանելով դիտարկման արժանի յուրաքանչյուր ոլորտի հարցերին, ցուցաբերում ենք համապատասխան աջակցություն աշակերտին, ընդգրկում նրան դասապրոցեսին, ուսումնական գործընթացում, խմբային աշխատանքների միջոցով ներգրավում բոլոր դասերին:

Փորձարարական մաս

Ես, ունենալով ԿԱՊԿՈՒ աշակերտ դասարանում, փորձեցի հնարավորինս ընդգրկել նրան բոլոր դասերին, հատկապես «Մայրենիի» և «Մաթեմատիկայի» ժամերին՝ տալով նրան որոշակի հրահանգներ և առաջադրանքներ, ինչպես նաև ընդգրկել խմբային աշխատանքներում:

Դասի պլանավորում 1

1. ***Դասարան***-1-ին
2. ***Առարկա***-մայրենի
3. ***Դասի թեման***-Հորինել պատմություն նկարի շուրջ: Գտնե՛լ տարբերությունները: Կազմե՛լ խմբեր:
4. ***Դասի տիպը***-նոր նյութի հաղորդման
5. ***Դասի նպատակը*** ՝ Զարգացնել
   - Երեխաների բանավոր խոսքը
   - Տրամաբանական մտածողությունը
   - Խմբեր կազմելու կարողությունն ըստ ընդհանուր հատկանիշների, ձևի և գույնի
   - Զարգացնել տեսողական ընկալման կարողությունը
   - ԿԱՊԿՈՒ աշակերտի համար-կենտրոնացնել ուշադրությունը տրված հրահանգներով, կատարել պարզագույն հրահանգներ
6. ***Վերջնարդյունքը*** ՝
   - Կարողանա նկարի շուրջ հորինել պատմություն
   - Կարողանա պատմությունից առանձնացնել նախադասություններ, իսկ նախադասություններից՝ բառեր
   - Կարողանա թվարկել մրգերի, կենդանիների և խոհանոցային պարագաների անուններ (տես հավելված 2)
   - Կարողանա խմբեր կազմել ըստ տրված հատկանիշների
   - Կարողանա նկարներում գտնել տարբերությունները
   - ԿԱՊԿՈՒ աշակերտի համար-Կարողանա կատարել պարզագույն հրահանգներ, թվարկի և ցույց տա որոշ մրգեր ու կենդանիներ, խոհանոցային պարագաներ:
7. ***Ռեուրսներ*** ՝համակարգիչ, պրոյեկտոր, նկարներ, քարտեր
8. ***Խնդիրներ*** ՝
   - Ակտիվ բառապաշարի ընդլայնում

- Ձեռքի նրբաշարժումներով ճիշտ աշխատանք
- Պատմություն-նախադասություն-բառ շղթայի ամրակայում
- ԿԱՊԿՈՒ աշակերտի ներգրավումը դասապրոցեսին

9. ***Խաչվող հասկացություններ*** ՝պատճառ և հետևանք, համակարգ և մոդել

Դասի ընթացքը-խթանում

Բավիղներով քարտային աշխատանք [զույգերով] (տես հավելված 3)

Իմաստի ընկալում-ստեղծենք պատմություն նկարի շուրջ: Մայր կատուն անցել է գետի մյուս ափը: Փոքրիկ կատուն մնացել է այս ափին: Օգնենք ձագուկին: Քարերը գծերով միացնենք իրար: Նշենք մյուս ափ տանող ճանապարհը: Պետք է ճիշտ գծել, տարբերել քարն ու թուփը, որ հանկարծ ձագուկը ոտքը չդնի թփի վրա ու խեղդվի:

Պատմությունից առանձնացնում ենք «կենդանի» նախադասություններ: Նախադասություններում փոխում ենք բառեր և կրկնում պատմություն-նախադասություն-բառ շղթան:

Հաջորդ վարժություններ համար բաժանվում ենք խմբերի: Բաժանվում ենք 2 խմբի:

1-ին խումբ մրգեր, 2-րդ խումբ կենդանիներ (թվով 10 հոգի), (1-ին խմբում է նաև ԿԱՊԿՈՒ աշակերտը)

Հերթով թվարկում ենք մրգեր, ընտանի կենդանիներ, խոհանոցային պարագաներ

Հաղթում է այն խումբը, որն ավելի շատ է մրգեր, ընտանի կենդանիներ, խոհանոցային պարագաներ թվարկել:

Աջ առաջադրանքում խմբավորում ենք տառանիշները ըստ գույնի և ձևի:

Վերջին առաջադրանքը՝ երկու նկարներում գտնում ենք տարբերությունները: Որ խումբն ավելի շատ տարբերություններ գտնի, այն խումբը կհաղթի:

Կշռադատում «կենդանի խաղ»

«Պատմություն-նախադասություն-բառ» շղթայով երեխաների մասկանցությամբ:

Learning gaps գործիքով խմբավորել մրգերը, ընտանի կենդանիները խոհանոցային պարագաները: https://learningapps.org/display?v=pxr8py8mc23

Դասի վերլուծությունծություն

ԿԱՊԿՈԻ աշակերտը կարողացավ կատարել իրեն հանձնարարված պարզագույն հրահանգները, սակայն շուտ ձանձրանալով փորձեց խանգարել մյուսներին: Իրավիճակը շտկվեց խմբային աշխատանքների ժամանակ, նա ակտիվ մասնակցություն ունեցավ և թվարկեց մրգերի, կենդանիների անուններ, խոհանոցային պարագաների անուններ, ինչպես նաև ակտիվություն ցուցաբերեց «կենդանի խաղ» վարժության ժամանակ:

Դասի պլանավորում 2

1. ***Դասարան***-1-ին
2. ***Առարկա***-մաթեմատիկա
3. ***Դասի թեման***-Առարկայի համրանք: Թիվ: Մեկից հինգ թվերի անվանումները
4. ***Դասի տիպը***-Նոր նյութի հաղորդման
5. ***Դասի նպատակը*** ՝
   - Առարկաներ հաշվելու կարողության ձևավորում,
   - Հավաքածուներ կազմելու կարողության ձևավորում,
   - Խմբեր կազմելու կարողության ձևավորում ըստ տրված հատկանիշի (գույն, ձև):
   - ԿԱՊԿՈՒ աշակերտի համար-կենտրոնացնել ուշադրությունը տրված հրահանգների շուրջ, կատարել պարզագույն հրահանգներ

   Վերջնարդյունքներ ՝
   - Կկարողանա հաշվել խմբերում առարկաների քանակը,
   - Կճանաչի և կտեսակավորի որոշակի ընդհանուր հատկանիշներով օժտված առարկաներ,
   - Կխմբավորի առարկաները ըստ տրված հատկանիշի (գույն, ձև):
   - ԿԱՊԿՈՒ աշակերտի համար-Կարողանա կատարել պարզագույն հրահանգներ, ցույց տա որոշ երկրաչափական պատկերներ, թվարկի գույներ
6. ***Ռեսուրսները***-համակարգիչ, հաշվեձողիկեր, մատիտներ, քարտեր
7. ***Միջանկյալկապ***-Մայրենի
8. ***Խաչվողհասկացություններ***-համակարգ և մոդել

9. ***Խթանում***-Համրանք տարբեր առարկաներով (ձողիկներ, մատիտներ, վարժ. 1՝ տե՛ս հավելված 4)

Իմաստի ընկալում-հաշվել մատիտների խմբերը (1-5 թվերի սահմանում, վարժ. 2) զույգերով:

Խմբային աշխատանք - 2 խումբ

1-ին խումբ-հաշվեձողիկներ, 2-րդ խումբ մատիտներ, (2-րդ խմբի մեջ է նաև ԿԱՊԿՈՒ երեխան)

Տեսակավորել առարկաները և կազմել հավաքածուներ՝ (ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն, վարժ. 3) learni gaps գործիքի միջոցով:https://learningapps.org/display?v=peihpu2bt23

Հաղթում է այնխումբը, որը ճիշտ է կազմել հավաքածուները:

Խմբային աշխատանք (վարժ. 4):

Հաջորդ առաջադրանքը կատարել քարտերի միջոցով՝ խմբավորել երկրաչափական պատկերները ըստ գույների և ձևերի: (Տե՛ս հավելված 4)

Կշռադատում-Հաշվել երկրաչափական պատկերները ըստ ձևի և գույնի, և արտասանել

Օր.՝շրջան՝

Ես շրջանն եմ կլորիկ,

Լուսնի նման սիրունիկ,

Ես անիվ եմ պտտվող,

Եվ գաթա եմ կարմրակող:



Օր.՝քառակուսի կամ քառանկյուն

Քառանկյունն եմ, քառանկյուն,

Ունեմ 4 ուղիղ անկյուն,

Անկյուններում իմ տաքուկ,

Կնստեն 4 փիսիկ փափուկ:

Օր.՝ եռանկյուն

Եռանկյունն եմ, եռանկյուն,

Ես ունեմ 3 անկյուն,

3 կողմ, 3 գագաթ,

Թե՛կուզես հաշվի՛ր արագ՝ 1, 2, 3:



Օր.՝ ուղղանկյուն

Ուղղանկյունն եմ, ուղղանկյուն,

Ունեմ 4 ուղիղ անկյուն,

ԵՎ կողմեր հանդիպակաց, երկարություն, լայնություն:

Դասի վերլուծություն

ԿԱՊԿՈՒ աշակերտը կատարեց պարզ հրահանգներ՝ ցույց տալով ձողիկներն ու մատիտները, նշելով գույները: Դժվարությամբ ինտեգրվելով խմբային աշխատատանքում՝ ցույց տվեց միայն պարզ երկրաչափական պատկերները՝ չմասնակցելով պատկերների խմբավորմանը և տեսակավորմանը:

Դասի պլանավորում 3

1. ***Դասարան***-1-ին
2. ***Առարկա***-Մայրենի
3. ***Դասիթեման***-Քաղաք, նախադասություն, բառի գծապատկեր
4. ***Դասի նպատակը*** ՝
   - ✶ Զարգացնել երեխաների բանավոր խոսքը,
   - ✶ Զարգացնել բառապաշարը ընդլայնելու կարողությունը,
   - ✶ Զարգացնել ճանաչողությունը՝ գյուղ, քաղաք հասկացությունների վերաբերյալ,
   - ✶ Ճանաչել նախադասության և բառի գծապակերները և վերջակետը:
   - ✶ ԿԱՊԿՈՒ աշակերտի համար- Զարգացնել աշակերտի ճանաչողությունը պարզ հրահանգներով:

Վերջնարդյունքներ ՝

- ✶ Կկարողանա պատմել թեմատիկ նկարը,
- ✶ Կտարբերի գյուղն ու քաղաքը,
- ✶ Կճանաչի նախադասության և բառի գծապատկերները և վերջակետը:
- ✶ ԿԱՊԿՈՒ աշակերտի համար-Կկարողանա ցույց տալ պարզագույն պատկերներ, կտարբերի գյուղի և քաղաքի նկարները:

5. ***Միջառարկայական կապ***-մաթեմատիկա, կերպարվեստ:

   Խաչվող հասկացություններ-տարածություն և ժամանակ:
6. ***Խնդիրներ***-ակտիվ բառապաշարի ընդլայնում

   Նախադասության և բառի գծապատկերների իմացություն

   ԿԱՊԿՈՒ աշակերտի ներգրավումը դասապրոցեսին

Դասի ընթացք-խթանում-հարց ու պատասխան՝

- Ովքե՞ր են եղել քաղաքում,
- Ի՞նչ կա քաղաքում, որ գյուղում չկա,
- Ո՞րն է գյուղի և քաղաքի տարբերությունը,
- Ձեզ դու՞ր է գալիս քաղաքի փողոցները,
- Նկարի վրա ցույց տալ այն շենքերը, որոնք կան քաղաքում,
- Ի՞նչ նկատեցիք քաղաքի փողոցներում, որ գյուղում չկա:

Իմաստի ընկալում-կապույտ շրջանակի մեջ քաղաքային տեսարան է: Նկարում Երևան քաղաքն է, երևանյան փողոց է: Հեռվում երևում է Մասիս սարը, փողոցում բարձրահարկ շենքեր են: Մայթերով քայլում են անցորդները: Փողոցում կախված է լուսակիրը: Մեքենաների համար կարմիր լույս է վառվում, ուրեմն անցումով կարող են անցնել անցորդները: Անցումով անցնում են երեխաները: Նրանք դպրոցից տուն են վերադառնում: Մի նկարիչ մայթին կանգնած նկարում է երևանյան տեսարան (տե՛ս հավելված 5): Այժմ պատմությունից առանձնացնենք մի քանի նախադասություն:

Դրանք նկար-նախադասություններ են՝ *Նկարիչը նկարում է*: Այս նախադասությունն ունի հետևյալ գծապակերը՝

Քարտ

Տղան հեծանիվ է քշում՝

Քարտ

Լուսակիրը կանաչ ճանապարհ է ցույց տալիս:

Քարտ

Այս նախադասություններից առանձնացնենք բառեր՝ նկարիչ, հեծանիվ, լուսակիր

Կշռադատում-Պատմությունը կազմող նախադասություններն իրարից անջատվում են դադարներով, իսկ այդ դադարների համար օգտագործվում է վերջակետ: Երկար նախադասությունները շատ բառեր են պարունակում, կարճ նախադասությունները՝ քիչ:

Խմբային աշխատանք ՝քարտերի միջոցով (նախադասության գծապատկեր)

երկու խումբ, 1-ին խումբ-նախադասություններ, 2-րդ խումբ-բառեր,2-րդ խմբում է նաև ԿԱՊԿՈՒ երեխան:▪

Օր.՝

: Կազմել նախադասություններ ըստ գծապատկերի: Հաղթում է այն խումբը, որը ճիշտ է կազմում: Խմբավորել գյուղն ու քաղաքը,եթե ճիշտ խմբավորեք, կբացվի տեսանյութ սիրելի քաղաքի մասին:https://learningapps.org/display?v=p5809irw521

Դասի վերլուծություն

ԿԱՊԿՈՒ աշակերտը կարողացավ կատարել պարզ հրահանգներ՝ ցույց տվեց գյուղի և քաղաքի նկարները, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցավ խմբային աշխատանքներում: Նա մասնակցեց գյուղի և քաղաքի պատկերների խմբավորմանը lerningaps գործիքի միջոցով և դիտեց տեսանյութը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատաքնի շրջանակներում առաջադրված նպատակի ուսումնասիրության արդյունքում եկանք ստորև ներկայցված եզրահանգումներին՝

- Ուսումնասիրելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենքը, պարզ դարձավ, որ այն կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:
- Խնդիր ունենալով բացահայտել ուսումնական ծրագրի ճիշտ պլանավորման և միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող երեխաներին, պետք է հաշվի առնել, որ որակյալ կրթության ապահովման համար, անհրաժեշտ է ուսումնական գործընթացում երեխային դիտարկել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով և դժվարություններով հանդերձ, որից հետո արդեն կարելի կլինի իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:
- Վերը նշված քայլերի հաջորդական իրականացնելուց հետո, կցուցաբերվի համապատասխան աջակցություն և ինտեգրում՝ դասապրոցեսին, խմբային աշխատանքների միջոցով ներգրավում ուսումնական գործընթացում:

Ներառական կրթությունը սկսվում է մանկավարժների վերաբերմունքի, հմտության և գիտելիքի եռամիասնության դրսևորումից: Առանց այս հավասարակողմ եռանկյունու գոյության, շատ դժվար կլինի խոսել որակյալ կրթության մասին:

Ամփոփելով վերը նշվածը կարող ենք ասել, որ բոլորիս համար չափազանց կարևոր է, որ մեր երկրում բոլոր երեխաների համար բաց լինեն բոլոր դպրոցների և այլ կառույցների դռները, և որ նրանք, իրենց ծնողների և ուսուցիչների ջերմությամբ ու աջակցությամբ շրջապատված, վստահորեն փնտրեն, գտնեն ու ապահովեն իրենց տեղն ու դերը հասարակության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բժշկահոգեբանականն գնահատման կենտրոն, Հատուկ կրթություն գիտամեթոդական տեղեկատու-Մաս 5. ՎՆ Եր.: 2011-108 էջ
2. Ներառական կրթութուն. Ուսումնամեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. ՎՆ Եր.: Հույսի Կամուրջ ՀԿ, 2015-200էջ
3. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրաման
4. FunctionalAssessmentMeasure (FAM) միջազգային գնահատման գործիք է, որի 12 ոլորտները վերամշակվել և հարմարեցվել են 3-18 տարեկան երեխաների գործունեության գնահատման համար: https://www.kcl.ac.uk/nursing/departments/cicelysaunders/resources/tools/fimfam.aspx
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166

Հավելված 1

ԾՆՈՂԻ ՀԵՏ ԵՐԵԽԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հարգելի ծնող,

_____դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամները և ուսուցիչները Ձեր երեխայի՝_____ ի կրթությունն առավել արդյունավետ և որակյալ կազմակերպելու նպատակով առաջարկ են ներկայացրել իրականացնելու դպրոցական մակարդակի գնահատում: Ձեր գրավոր թույլտվությունն անհրաժեշտ է, որպեսզի մեր դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի անդամները և ձեր երեխայի ուսուցիչները Ձեզ հետ միասին գնահատեն Ձեր երեխայի ուժեղ և թույլ կողմերը և, հենվելով նրա ուժեղ կողմերի վրա, առավել արդյունավետ կազմակերպեն նրա կրթության գործընթացը: Դպրոցական մակարդակի գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը կպահվի գաղտնի և առանց Ձեր գրավոր համաձայնության չի կարող տրամադրվել երրորդ կողմի: Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքում Ձեր երեխայի կրթական ծրագրերում ոչ մի փոփոխություն չի նախատեսվում: Անհրաժեշտության դեպքում, Ձեր համաձայնությամբ, հնարավոր է, որ Ձեր երեխային առաջարկվի տրամադրել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն՝ դպրոցի մանկավարժահոգեբանական խմբի կողմից: Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքներին կծանոթանաք Ձեր գրավոր թույլտվությունը դպրոցի կողմից ստանալուց ոչ ուշ, քան 21 օր հետո:

Նամակի վերջում Ձեր գրավոր պատասխանի տիպային օրինակում խնդրում ենք նշել՝ ,Տալիս եմ իմ համաձայնությունը կամ ,Չեմ տալիս իմ համաձայնությունը տարբերակներից մեկը, նշեք Ձեր անունը, ազգանունը և ստորագրեք ու 2 օրվա ընթացքում այն ներկայացրեք դպրոցի տնօրենին:

_____դպրոցի տնօրեն՝

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Տեղեկացված եմ, որ առանց իմ թույլտվության երեխայիս չեն կարող գնահատել: Գիտեմ նաև, որ իմ համաձայնությունը կարող եմ չեղյալ համարել ցանկացած ժամանակ: Տալիս եմ իմ համաձայնությունը / Չեմ տալիս իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս ուժեղ և թույլ կողմերի դպրոցական մակարդակի գնահատում:

Ծնողի անուն, ազգանուն՝ _____

Ստորագրություն _____ Ամիս, ամսաթիվ _____

Հավելված 2

Հավելված 3



Հավելված 4



Հավելված 5